56-ՐԴ ՆԻՍՏ

4 հունվարի 1919թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 5-ին, նախագահությամբ *Ա. Սահակյանի,* մինիստրական օթյակում են Մինիստր-նախագահը, արտաքին գործոց, խնամատարության, զորական և իրավարարության մինիստրները:

Մինիստր-նախագահ - Սոց. հեղ[ափոխականների] ֆրակցիայի այն հարցումին, թե ինչու՞ կառավարությունը չի կարդում իր դեկլարացիան, պատասխանում է, որ նախ՝ 9 մինիստրներից 4-ը բացակայում էին, հետևապես և ամբողջական դեկլարացիա կազմել հնարավոր չէր, ապա՝ թուրքերն սկսեցին դատարկել մեր երկիրը, այդ միջոցին մեծ աշխատանք էր պահանջվում կառավարությունից և վերջապես երրորդ պատճառն այն է, որ սկսվեց հայ-վրացական կոնֆլիկտը, որ իրեն էր գրավել կառավարության ուշադրությունն ամբողջովին:

Այն կասկածը, որ ունի իր մեջ հարցումը, այսինքն՝ կառավարությունը արժեք չի ուզում տալ խորհրդարանին և բարձրից է նայում նրա վրա, սխալ է և անտեղի, քանի որ նման դեֆեկտները առաջանում են մեկ այլ պատճառով, որ, ինչպես ասացի, ժամանակ չի ունենում կառավարությունը և մեկ էլ, որ դրանք ձևական խնդիրներ են:

Պարենավորման մինիստր - Պատասխանում է դաշնակցական ֆրակցիայի հարցումին, որ վերաբերում է բրինձի գնման և դրա համար նշանակված պաշտոնյաներ Սահակյանի և Թադևոսյանի կատարած զեղծումներին:

Մինչև օրս, գնողների տված տեղեկությունների համաձայն, գնված է 80.000 փ. բրինձ. հիշյալ Թադևոսյանի և Սահակյանի կատարած զեղծումների համար էլ փաստեր չունենք:

Զորական մինիստր - Պատասխանում է մահվան պատժի վերաբերմամբ սոց-[իալ]-դեմ[ոկրատների] ֆրակցիայի կողմից արված հարցումին: Մենք ղեկավարվում ենք ռուսական հին օրենքներով, որոնք զինվորական գործի մեջ որոշ դեպքերում թույլատրում են մահվան պատիժը:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Զեկուցում է ներքին գործոց մինիստրության նախահաշվի մասին, որ խորհրդարանն ընդունում է 9 ընթերցումով և հանձնում խմբագրական հանձնաժողովին:

Խորհրդարանը թույլատրում է կառավարությանը Դարալագյազի առանձին բատալիոնը պահել՝ հունվար ամսին հոգալով նրա ծախքերը:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 12-ին:

«Զանգ», 19 հունվարի 1919թ.